



Social Security

Կերակրողին կորցնելու
կապակցությամբ նպաստներ

www.socialsecurity.gov

Բովանդակություն

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել 3

Եթե Դուք աշխատում եք...ի՞նչ է անհրաժեշտ իմանալ
ժառանգորդի նպաստների մասին` . . 4

Երբ մահանում է հարազատը... ի՞նչ պետք է Դուք իմանաք
ժառանգորդի նպաստների մասին` . . 8



Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել

Այցելե՛ք մեր կայքէջը`

Մեր` www.socialsecurity.gov կայքում Դուք կարող եք`

- Ստեղծել *my* Social Security անձնական էջը` Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության Հաշվետվությունը) դիտարկելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստ ների հավաստագրության նամակը տպելու, Ձեր անմիջական ավանդադրման վերաբերյալ տեղեկատվությունը փոփոխելու, Medicare քարտի փոխարինում հայցելու, 1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Օժանդակ օգնության (Extra Help) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրվող դեղորայքի ծրագրի ծախսերի համար);
- Դիմել ծերության (կենսաթոշակային), հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար;
- Ստանալ Ձեր Սոցիալական Ապահովության տարածքային Գրասենյակի հասցեն ;
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները ; և
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին:

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Ձանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքէջից օգտվելուց, կարող եք մեզ անվճար զանգահարել **1-800-772-1213** հեռախոսահամարով: Եթե խոսում եք իսպաներեն, սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար, սեղմեք 1, սպասեք գծի վրա և Անգլերեն լեզվով մեքենայացված ձայնով հուշումների ժամանակ մնացեք լուռ մինչև մի ներկայացուցիչ պատասխանի: Ներկայացուցիչն կկապվի մի թարգմանչի հետ, ձեր հեռաձայնային խոսակցությանը օգնելու համար: Թարգմանչական սպասարկությունները տրամադրելի են անվճար: Մենք կարող ենք պատասխանել մասնավոր հարցերի առավոտյան ժամի 7-ից մինչև երեկոյան ժամի 7-ը, երկուշաբթի-ուրբաթ: Ընդհանրապես եթե զանգահարեք շաբաթվա մեջ երեքշաբթի-ին հաջորդող օրերին, սպասելու ժամանակն ավելի կարճ կլինի: Մենք կարող ենք տեղեկությունները տրամադրել մեքենայացված հեռախոսային ծառայություն, օրական 24 ժամ Անգլերեն լեզվով: Եթե դուք խուլ եք կամ տկար լսողություն ունեք, պապ կարող եք զանգահարել մեր TTY համարով **1-800-325-0778**:

Ուզում ենք նաև վստահ լինել, որ ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության մի երկրորդ ներկայացուցիչ հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Ընտանիքի գումար վաստակողի կորուստը կարող է քայքայիչ լինել և՛ հուզմունքային առումով, և՛ ֆինանսապես: Սոցիալական Ապահովությունը օգնում է՝ եկամուտ տրամադրելով մահացած աշխատողի ընտանիքներին: Իրականում, յուրաքանչյուր 100 երեխայից 98-ը կարող է նպաստներ ստանալ, եթե նրա աշխատող ծնողը մահանում է: Ինչպես նաև, Սոցիալական Ապահովությունը երեխաներին վճարում է ավելի նպաստներ, քան որևէ այլ դաշնային ծրագիր:

Տվյալ տեղեկագրում ներկայացված է համառոտ տեղեկատվություն մահացած աշխատողների ամուսինների (կողակիցների) և երեխաներին Սոցիալական Ապահովության կողմից վճարվող ժառանգորդի նպաստների վերաբերյալ: Տվյալ տեղեկագիրը նախատեսված չէ պատասխանելու Ձեր հնարավոր բոլոր հարցերին: Սոցիալական Ապահովության կողմից վճարվող ժառանգորդի նպաստների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՛ք մեր կայքը, կամ գանգահարե՛ք մեր անվճար հեռախոսահամարներով:

Եթե Դուք աշխատում եք...ի՞նչ է անհրաժեշտ իմանալ ժառանգորդի նպաստների մասին՝

«Կյանքի ապահովագրություն» Սոցիալական Ապահովությունից՝

Շատ մարդիկ Սոցիալական Ապահովության մասին մտածում են միայն որպես կենսաթոշակային ծրագիր: Սակայն, Ձեր կողմից վճարվող Սոցիալական Ապահովության հարկերի մի մասը ուղղվում է ժառանգորդի նպաստներին՝ աշխատողների և նրանց ընտանիքների համար: Իրականում, ժառանգորդի նպաստի այն արժեքը, որը Դուք ունեք Սոցիալական Ապահովության շրջանակներում հավանաբար շատ ավելին է, քան Ձեր կյանքի անհատական ապահովագրության արժեքը:

Երբ Դուք մահանում եք, Ձեր ընտանիքի որոշակի անդամներ կարող են ժառանգորդի նպաստներ ստանալու իրավասություն ունենալ: Այդ թվում են այրիները (կին կամ տղամարդ, ինչպես նաև ամուսնալուծված այրիները), երեխաները և խնամարկյալ ծնողները:

Ինչպե՞ս եմ ես ժառանգորդի նպաստ վաստակում

Աշխատելով ու հարկեր վճարելով՝ Դուք Ձեր Սոցիալական Ապահովության նպաստների համար միավորներ (կրեդիտներ) եք վաստակում: Տարիների քանակը, որն անհրաժեշտ է, որ Դուք աշխատած լինեք, որպեսզի Ձեր ընտանիքը իրավասու լինի ստանալու Սոցիալական Ապահովության ժառանգորդի նպաստներ, կախված է մահվան պահին Ձեր տարիքից: Որքան Դուք երիտասարդ եք, այդքան

ավելի քիչ տարիների աշխատելու անհրաժեշտություն կլինի: Սակայն ոչ ոք չունի ավելի քան 10 տարի աշխատելու կարիք՝ Սոցիալական Ապահովության որևէ նպաստի համար իրավասություն ունենալու նպատակով:

Հատուկ կանոնի ներքո՝ եթե, մինչև Ձեր մահը, Դուք աշխատել եք միայն մեկ և մեկուկես տարի երեք տարվա ընթացքում, մենք կարող ենք նպաստներ վճարել Ձեր երեխաներին և ամուսնուն (կողակցին), որը խնամում է Ձեր երեխային:

Ով կարող է ստանալ Ժառանգորդի նպաստ Ձեր աշխատանքի հիմքով՝

• **Ձեր այրին (կին կամ տղամարդ)** կարող է հնարավորություն ունենա ստանալու լիարժեք նպաստ՝ կենսաթոշակի լրիվ տարիքում: Ժառանգորդների համար կենսաթոշակի լրիվ տարիքը 66-ն է՝ 1945-1956թթ. ծնված անձանց համար, և աստիճանաբար բարձրանում է մինչև 67-ը՝ 1962թ-ին կամ ավելի ուշ ծնվածների համար: Ձեր այրին կարող է ստանալ նվազեցված նպաստներ սկսած 60 տարեկանից: Եթե Ձեր ժառանգորդ ամուսինյ (կողակիցը) հաշմանդամ է, ապա նպաստները կարող են մեկնարկել սկսած 50 տարեկանից: Այրիների և այլ ժառանգորդների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար՝ այցելե՛ք www.socialsecurity.gov/survivorplan կայքէջը:

• **Ձեր այրին (կին կամ տղամարդ)** կարող է նպաստներ ստանալ ցանկացած տարիքում, եթե խնամում է Սոցիալական Ապահովության նպաստներ ստացող երեխայի, և որը 16 տարեկանից ցածր է կամ հաշմանդամ:

• **Ձեր չամուսնացած երեխան**, որը 18 տարեկանից ցածր է (կամ մինչև 19 տարեկանը, եթե նա տարրական (elementary) կամ միջնակարգ (secondary) ցերեկային ուսուցման ուսանող է) նույնպես կարող է նպաստներ ստանալ: Ձեր երեխաները կարող են նպաստներ ստանալ ցանկացած տարիքում, եթե նրանք հաշմանդամ են դարձել մինչև 22 տարեկանը և մնացել են հաշմանդամ: Որոշ հանգամանքներում, մենք կարող ենք նպաստներ վճարել նաև Ձեր խորոջ երեխաներին, թոռներին, խորթ թոռներին կամ որդեգրված երեխաներին:

ՆՇՈՒՄ՝ Հաշմանդամ երեխաները, ում ծնողները ունեն սահմանափակ եկամուտ և միջոցներ, կարող են Հավելյալ Ապահովության եկամտի (SSI) նպաստների իրավասություն ունենալ: Լրացուցիչ տեղեկատվությունը ծանոթացե՛ք նպաստներ Հաշմանդամություն ունեցող երեխաների համար (Benefits For Children With Disabilities) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10026):

• **Ձեր խնամարկյալ ծնողները** կարող են նպաստներ ստանալ, եթե նրանք 62 տարեկան են կամ ավելի բարձր: (Որպեսզի

Ձեր ծնողները իրավասու լինեն որպես խնամարկյալներ, Դուք պետք է առնվազն կեսով չափ ապահովեք նրանց աջակցության կարիքները):

Նպաստներ ամուսնալուծված ժառանգորդ ամուսինների (կողակիցների) համար`

Եթե ամուսնալուծված եք, Ձեր նախկին ամուսինը (կողակիցը), որը 60 տարեկան է կամ ավելի բարձր (կամ 50-ից 59` հաշմանդամ լինելու դեպքում) կարող է ժառանգորդի նպաստ ստանալ, եթե Ձեր ամուսնությունը տևել է առնվազն 10 տարի: Այնուամենայնիվ, պարտադիր չէ, որ Ձեր նախկին ամուսինը (կողակիցը) համապատասխանի տարիքի կամ ամուսնության տևողության կանոնների պահանջներին, եթե նա խնամում է Ձեր երեխային, որը 16 տարեկան է կամ ավելի ցածր կամ հաշմանդամ է, և ունի Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու իրավասություն Ձեր հաշվառման ներքո: Երեխան պետք է լինի Ձեր նախկին ամուսնու (կողակցի) կենսաբանական կամ օրինականորեն որդեգրված երեխան:

Նպաստները, որոնք վճարվում են Ձեզ որպես նախկին ամուսին (կողակից), որևէ ազդեցություն չեն ունենա այն նպաստի դրույքաչափի վրա, որը կստանան մյուս ժառանգները աշխատողի հասույթի հաշվառման ներքո: Այնուամենայնիվ, եթե Դուք հանդիսանում եք ժառանգորդ ամուսնալուծված մայր կամ հայր, որի խնամքի տակ է գտնվում աշխատողի մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխան, ապա Ձեր նպաստը կարող է ազդեցություն ունենալ նույն հաշվառման ներքո մյուս շահառուների նպաստների վրա:

Հետմահու միանվագ վճար`

Եթե Դուք բավականաչափ երկար եք աշխատել, ապա Ձեր մահվանից հետո մենք կատարում ենք \$255-ի գումարի միանվագ վճարում: Այս նպաստը կարող է վճարվել միայն Ձեր ամուսնուն (կողակցին) կամ երեխային, եթե նրանք համապատասխանում են որոշակի պահանջներին: Ժառանգորդները պետք է դիմեն տվյալ վճարի համար մահվան ամսաթվից երկու տարվա ընթացքում:

Որքա՞ն են կազմում նպաստները`

Այն գումարը, որը կարող է Ձեր ընտանիքը ստանալ *Սոցիալական Ապահովությունից, կախված է Ձեր ողջ կյանքի ընթացքում վաստակած միջին հուսույթից: Որքան շատ եք Դուք վաստակել, այդքան ավելի բարձր կլինեն նրանց նպաստները:*

Ստուգե՛ք Ձեր *Սոցիալական Ապահովության Հաշվետվությունը (Social Security Statement)*, որպեսզի տեսնեք ժառանգորդի նպաստի նախահաշվարկը, որը մենք կարող

ենք վճարել: Այն նաև ցույց է տալիս Ձեր կենսաթոշակային և հաշմանդամության նպաստների նախահաշվարկը, ինչպես նաև տրամադրում է այլ կարևոր տեղեկատվություն: Առցանց ստեղծե՛ք **my Social Security** անձնական հաշիվը՝ Ձեր Հաշվետվությունը (Statement) դիտելու նպատակով:

my Social Security Առցանց անձնական հաշիվը՝

Այժմ կարող եք հեշտությամբ կարգավորել **my Social Security** անվտանգ առցանց անձնական հաշիվը: Դա թույլ է տալիս Ձեզ մուտք ունենալ Ձեր *Սոցիալական Ապահովության* Հաշվեցույցին՝ Ձեր հասույթը ստուգելու և նպաստների նախնախական հաշվարկը ստանալու համար: Դուք կարող եք նաև օգտագործել Ձեր **my Social Security** առցանց անձնական հաշիվը՝ Սոցիալական Ապահովության համարով քարտի փոխարինման հայց ներկայացնելու համար (հասանելի է որոշ նահանգներում և Կոլումբիայի Շրջանում) (request a replacement Social Security number card (available in some states and the District of Columbia)):

Եթե ներկայումս նպաստներ եք ստանում, Դուք նաև կարող եք՝

- Ստանալ Ձեր նպաստի հավաստագրման նամակ;
- Փոխել Ձեր հասցեն և հեռախոսահամարը;
- Խնդրել Medicare-ի քարտի փոխարինում;
- Խնդրել SSA-1099 կամ SSA-1042S փոխարինում հարկային ժամանակաշրջանի համար; կամ
- Մեկնարկել կամ փոխել Ձեր ուղղակի փոխանցումը (direct deposit):
- Դուք կարող եք **my Social Security** անձնական հաշիվ ստեղծել, եթե Դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր, ունեք Սոցիալական Ապահովության համար, գործող էլ. փոստի հասցե և ԱՄՆ փոստային հասցե: Անձնական հաշիվը ստեղծելու համար այցելեք **www.socialsecurity.gov/myaccount** կայքէջը: Անհրաժեշտ կլինի, որպեսզի որոշ անձնական տեղեկատվություն տրամադրեք՝ Ձեր ինքնությունը հավաստելու համար, և այնուհետև Ձեզանից կխնդրվի օգտագործողի անուն և գաղտնաբառ ընտրել:

Երբ մահանում է հարազատը... Ի՞նչ պետք է Դուք իմանաք ժառանգորդի նպաստների մասին՝

Ինչպե՞ս եմ ես դիմելու նպաստների համար՝

Եթե Դուք ներկայումս չեք ստանում Սոցիալական Ապահովության նպաստներ՝

Դուք պետք է անմիջապես դիմեք ժառանգորդի նպաստների համար, քանի որ, որոշ դեպքերում, մենք նպաստները կվճարենք Ձեր դիմելու պահից, և ոչ աշխատողի մահվան ժամանակահատվածից:

Դուք կարող եք դիմել հեռախոսով, կամ Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակում: Մեզ անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն, սակայն մի՛ հետաձգեք դիմումի ներկայացումը փաստաթղթերի ամբողջական փաթեթը չունենալու պատճառով: Մենք կօգնենք Ձեզ դրանք ձեռք բերելու գործում: Մեզ անհրաժեշտ են կա՛մ փաստաթղթերի բնօրինակները, կա՛մ դրանք տրամադրող գրասենյակի կողմից վավերացված կրկնօրինակները:

Մեզ անհրաժեշտ տեղեկատվության թվում են՝

- Մահվան հավաստիքը՝ տրամադրված թաղման բյուրոյի կողմից, կամ մահվան վկայականը;
- Ձեր Սոցիալական Ապահովության համարը, և մահացած աշխատողի Սոցիալական Ապահովության համարը (SSN);
- Ձեր ծննդյան վկայականը;
- Ձեր ամուսնության վկայականը, եթե Դուք այրի եք (կին կամ տղամարդ);
- Ձեր ամուսնալուծության վկայականը, եթե Դուք դիմում եք որպես ամուսնալուծված այրի (կին կամ տղամարդ);
- Ձեր ինամարկյալ երեխաների Սոցիալական Ապահովության համարները, հասանելիության դեպքում, և ծննդյան վկայականները;
- Ձեր ամուսնու (կողակցի) ծննդյան վկայականն ու Սոցիալական Ապահովության համարը, եթե նա դիմում է նպաստների համար Ձեր եկամտի հիման վրա;
- Մահացած աշխատողի W-2 ձևաթուղթը, կամ ամենավերջին տարվա դաշնային հարկային հայտարարագիրը՝ ինքնաշխատ լինելու դեպքում: և
- Ձեր բանկի անունը և Ձեր հաշվեհամարը, որպեսզի Ձեր նպաստները հնարավոր լինի անմիջապես փոխանցել Ձեր հաշվեհամարին:

Եթե Դուք արդեն ստանում եք Սոցիալական Ապահովության Նպաստներ

Եթե Դուք նպաստներ եք ստանում որպես կին կամ ամուսին Ձեր ամուսնու (կողակցի) աշխատանքի հիմքով, ապա մենք կփոխակերպենք Ձեր նպաստները ժառանգորդի նպաստների, երբ Դուք մեզ զեկուցեք մահվան դեպքի մասին: Մենք Ձեզ հետ կապ կհաստատենք լրացուցիչ տեղեկատվության անհրաժեշտության դեպքում:

Եթե Դուք նպաստներ եք ստանում Ձեր սեփական աշխատանքի հիմքով, ապա զանգահարե՛ք կամ այցելե՛ք մեզ: Մենք կստուգենք տեսնելու, թե արդյո՞ք Դուք կարող եք ավելի շատ գումար ստանալ որպես այրի: Դուք կստանաք նպաստների համադրություն, որը հավասար կլինի ավելի բարձր գումարին: Անհրաժեշտ կլինի նաև, որպեսզի ներկայացնեք Ձեր ամուսնու (կողակցի) մահվան վկայականը:

Որքա՞ն ես կստանամ՝

Նպաստի գումարը ձևավորվում է մահացած անձի հասույթի հիման վրա: Որքան շատ է աշխատողը վճարել Սոցիալական Ապահովությանը, այնքան մեծ կլինեն Ձեր նպաստները:

Ժառանգորդին հասանելիք տոկոսադրույքի հաշվարկման նպատակով Սոցիալական Ապահովությունը ելնում է մահացած աշխատողի հիմնական նպաստի գումարից: Տոկոսադրույքը կախված է ժառանգորդի տարիքից և աշխատողի հետ նրա հարաբերակցական կապից: Եթե մահացած աշխատողը ստացել է նվազեցված նպաստներ, ապա որպես ժառանգորդի նպաստի հիմք մենք որպես ելակետային կդիտարկենք այդ գումարը: Նպաստների համար առավել հատկանշական հայցերում՝

- Այրին, կենսաթոշակի լրիվ տարիքում կամ ավելի բարձր, սովորաբար ստանում է աշխատողի հիմնական նպաստի գումարի 100 տոկոսը;
- Այրին, 60 տարեկանում կամ ավելի բարձր, սակայն մինչև կենսաթոշակի լրիվ տարիքը, ստանում է աշխատողի հիմնական նպաստի գումարի 71-ից 99 տոկոսը;
- Այրին, ցանկացած տարիքում, 16-ից ցածր երեխայի հետ, ստանում է աշխատողի հիմնական նպաստի գումարի 75 տոկոսը;
- Երեխան ստանում է աշխատողի հիմնական նպաստի գումարի 75 տոկոսը;

Ընտանիքի առավելագույն նպաստները՝

Կա սահմանափակում այն նպաստների համար, որոնք մենք կարող ենք վճարել Ձեզ և ընտանիքի այլ անդամներին յուրաքանչյուր ամիս: Սահմանաչափը կարող է տատանվել մահացած աշխատողի նպաստի գումարի 150-ից 180 տոկոսի սահմաններում:

Կենսաթոշակներ՝ Սոցիալական Ապահովության շրջանակում չընդգրկված աշխատանքի հիմքով՝

Եթե Դուք կենսաթոշակ եք ստանում այնպիսի աշխատանքի հիմքով, որի հասույթից վճարել եք Սոցիալական Ապահովության հարկեր, ապա այդ կենսաթոշակը որևէ կերպ չի անդրադառնա Ձեր Սոցիալական Ապահովության նպաստների վրա: Այնուամենայնիվ, եթե Դուք կենսաթոշակ եք ստանում այնպիսի աշխատանքի հիմքով, որի հասույթից չեք վճարել Սոցիալական Ապահովության հարկեր, օրինակ՝ դաշնային քաղաքացիական ծառայություն, որոշակի նահանգային կամ տեղական կառավարության աշխատանք, կամ աշխատանք արտերկրում, ապա մենք կարող ենք կրճատել Ձեր Սոցիալական Ապահովության նպաստը:

Կառավարության համակարգի այն աշխատողների համար, որոնք կարող են Սոցիալական Ապահովության նպաստների իրավասու լինել իրենց ամուսնու (կողակցի) հասույթի հաշվառման ներքո, լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք *Կառավարական Կենսաթոշակի Փոխհատուցում (Government Pension Offset) տեղեկագրից* (Հրատարակություն թիվ 05-10007) (Publication No. 05-10007): Արտերկրում աշխատողների կամ կառավարության համակարգի այն աշխատողների համար, որոնք Նույնպես իրավասու են իրենց սեփական Սոցիալական Ապահովության նպաստներին, ծանոթացե՛ք *Նպաստների Մատակարարման Անսպասելի Կրճատում (Windfall Elimination Provision) տեղեկագրից* (Հրատարակություն թիվ 05-10045) (Publication No. 05-10045):

Ի՞նչ տեղի կունենա եթե ես աշխատում եմ՝

Եթե Դուք աշխատում եք միևնույն ստանալով Սոցիալական Ապահովության նպաստներ, և դեռևս չի լրացել Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը, ապա մենք կարող ենք նվազեցնել Ձեր նպաստները, եթե Ձեր եկամտը գերազանցի որոշակի սահմանաչափը: (Ժառանգորդների համար կենսաթոշակի լրիվ տարիքը 66-ն է՝ 1945-1956թթ. ծնված անձանց համար, և աստիճանաբար բարձրանում է մինչև 67-ը՝ 1962թ-ին կամ ավելի ուշ ծնվածների համար): Որպեսզի պարզեք, թե որքան է հասույթի սահմանաչափը ընթացիկ տարվա համար, և թե ինչպես է տվյալ սահմանաչափը գերազանցող հասույթը նվազեցնում Ձեր Սոցիալական Ապահովության նպաստները,

կարդացե՛ք Ինչպես է Աշխատանքը Անդրադառնում Ձեր Նպաստներին (How Work Affects Your Benefits) տեղեկագիրը (Հրատարակություն թիվ 05-100069):

Հասույթի որևէ սահմանաչափ չի կիրառվում սկսած Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալու ամսվանից:

Ինչպես նաև, Ձեր հասույթը կնվազեցնի միայն Ձեր նպաստները, և ոչ ընտանիքի այլ անդամների նպաստները:

Ի՞նչ տեղի կունենա եթե ես վերստին ամուսնանամ՝

Սովորաբար Դուք չեք կարող ստանալ այրու նպաստ, եթե Դուք վերստին ամուսնանաք մինչև Ձեր 60 տարեկանը: Սակայն վերստին ամուսնությունը 60 տարեկանից հետո (կամ 50, եթե Դուք հաշմանդամ եք) չի խոչընդոտի նպաստների գումարները ստանալուն՝ Ձեր նախկին ամուսնու աշխատանքի հիմքով: Իսկ 62 տարեկանում կամ ավելի բարձր, Դուք կարող եք նպաստներ ստանալ Ձեր նոր ամուսնու աշխատանքի հիմքով, եթե այդ նպաստները ավելի բարձր լինեն:

Բողոքարկելու իրավունք՝

Եթե Դուք համաձայն չեք Ձեր հայցի կապակցությամբ կայացված որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել այն: Ձեր կողմից նախաձեռնվող քայլերի վերաբերյալ կարող եք ծանոթանալ *Բողոքարկման Գործընթացը (The Appeals Process)* տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10041):

Դուք կարող եք *ինքնուրույն վարել Ձեր բողոքարկման* վարույթը՝ Սոցիալական Ապահովության կողմից անվճար տրամադրվող աջակցության շնորհիվ, կամ կարող եք դիմել որևէ ներկայացուցչի օգնությանը: Մենք կարող ենք Ձեզ տեղեկատվություն տրամադրել այն կազմակերպությունների վերաբերյալ, որոնք կօգնեն Ձեզ ներկայացուցիչ գտնելու հարցում: Ներկայացուցիչ ընտրելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը (Your Right To Representation)* տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10075):

www.socialsecurity.gov



Social Security Administration

SSA Publication No. 05-10084-AM

Survivors Benefits (Armenian)

June 2016

Produced and published at U.S. taxpayer expense

Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: